ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 10-Լ

«22» 01 2025 թ.

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N 47 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության բնականոն գործունեությունն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով, Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի տեխնիկական անձնակազմի պարետի 2 թափուր հաստիքը Տավուշի և Սիսիանի կայազորների զինվորական դատախազությունների տեխնիկական անձնակազմի հավաքարարի 2 հաստիքով փոխարինելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2022 թվականի հունիսի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության հաստիքացուցակը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2021 թվականի նոյեմբերի 22-ի N 91 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 47 հրամանի 2-րդ հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 1-ին բաժնի 3.3-րդ գլխի 15.1-րդ կետի «Պարետ 26» բառերը փոխարինել «Պարետ 24» բառերով, «Ընդամենը 37» բառերը՝ «Ընդամենը 35» բառերով, «Ընդամենը՝

Ֆինանսատնտեսական վարչությունում 50» բառերը՝ «Ընդամենը՝ Ֆինանսատնտեսական վարչությունում 48» բառերով, 25-րդ գլխի «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում 150» բառերը՝ «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում 148» բառերով,

2) 4-րդ բաժնի 51-րդ գլխում ավելացնել նոր 200-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

3) «Հավաքարար 1»,

4) 4-րդ բաժնի 51-րդ գլխի «Ընդամենը 1» բառերը՝ փոխարինել «Ընդամենը 2» բառերով, «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Կայազորի զինվորական դատախազությունում 3» բառերը՝ «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Կայազորի զինվորական դատախազությունում 4» բառերով,

5) 4-րդ բաժնի 52-րդ գլխի 205-րդ կետի «Հավաքարար 0» բառերը փոխարինել «Հավաքարար 1» բառերով, «Ընդամենը 0» բառերը՝ «Ընդամենը 1» բառերով, «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Կայազորի զինվորական դատախազությունում 3» բառերը՝ «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Կայազորի զինվորական դատախազությունում 4» բառերով և «Ընդամենը՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում 40» բառերը՝ «Ընդամենը՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում 42» բառերով,

6) 5-րդ բաժնի «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում 150» բառերը՝ «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում 148» բառերով, իսկ «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում 40» բառերը՝ «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում 42» բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և

մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ **Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**